

# ՏԻԱՐ ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ

Հ. Բ. Ը. Մ. Ի ՆԱԽԱԳԱՀ

24 Հոկտ. քուակիր Զեկոյցով մը Հ. Բ. Ը. Մ. Ի Ընդհ. Տնօրենութեան Դիւանը կ'ստե-  
սէր Տիար Գալուստ Կիւլպենկեանի նախագահ ընտրութիւնը:

Իր Հիմնադիր-նախագահին մահուան վրայ խորագրած վշակոյթին մը ցոյցնելէն ետք  
Միութիւնը նոր նախագահի ընտրութիւնը անհրաժեշտ տեսած է Միութեան շահերուն համար իսկ:

Հայ Ազգին Լեւարտած բազմազան բշտաւորութեանց մեղմացումէն վերջ՝ Միութիւնը կոչ-  
ուած է գործունէութեան տարբեր դաշտ մը նկատելու՝ իր կանոնագրին 1 եւ 15 յօդուածներուն  
համաձայն: Այս նոր շարժումը ղեկավարելու համար անձնուոր եւ ձեռնհաս անձնաւորութիւն  
մը պիտի եր բազմեր Միութեան նախագահական արտոյն վրայ:

Միութիւնը այդ պաշտօնին գերազանցապէս արժանաւոր անձնաւորութիւնը գտած է յանձին  
Տ. Գալուստ Կիւլպենկեանի, եւ զայն ընտրած ու կոչած է այդ մեծ գործին զուիս անցնելու  
համար:

Այս ընտրութիւնը Հ. Բ. Ը. Մ. Ի համար նոր քուակն մը կը բանայ: Ամբողջ ազգին  
հետ՝ սրտանց ուրախ է նաեւ Ս. Յակոբեանց Միաբանութիւնը: Միութեան համար՝ վստակի ան  
կոչուած է ազգին բարձրացման եւ ազնուացման գործին մէջ մեծ դեր խաղալու: Եւրոպայի  
նախագահին համար՝ վստակի անոր մէջ կը տեսնէ ազնուական, կարող եւ եկեղեցասէր ու մեծ-  
անձն հայր որ ազգին կողմէ բարձր դիրքի մը կը կանգնուի:

ՏԻԱՐ Գ. ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ սիրելի եւ յարգելի է մասնաւորապէս մեզի՝ վստակի ան Ս. Ա.-  
քոռիս Հանգուցեալ Գանձալային եւ անոր գործակից Միաբանութեան աշխատանքը եւ դերը գնա-  
հատեց, կրօնասիրական եւ ազգասիրական ոգիով մը, որուն ապացոյցն ալ տուաւ, քոչորովին իր  
ծախսով շինել տալով գեղեցիկ եւ վայելուչ Մասնադարան մը վստակուց մէջ, ինչպէս նաեւ երեք  
տարի յաջորդաբար կարելու գումար մը նուիրելով Պատրիարքարանիս-Պաշտօնարարին, եւ այլ-  
եւ այլ առիթներով միշտ գարգուրամբ օգնելով Հայաստանաց Եկեղեցիին այս մեծ եւ փառաւոր  
Տան հանդէպ:

Ս. Արքոռոյս Մրբազան Տեղապահը արդէն մասնաւոր հեռագրով մը Միաբանութեան իրն-  
դակցութիւնն ու շնորհաւորութիւնները յայտնած է Ազգին եւ Ս. Արքոռոյս մեծ բարեբարին,  
ինչպէս կ'երեւի «Սիոնի» այս քիւիս ուրիշ միկ եջին վրայ:

Հ. Բ. Ը. Մ. Ի Դիւանը մեզի դիմած է Տ. Կիւլպենկեանի ընտրութեան մանրամասնու-  
թիւնները: մասնաւոր հաճոյքով կը հրատարակենք զայն ստորեւ:

ԽՄԲ.

## ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԸ ՏԻԱՐ ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ

ԻՐ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՄԷՋ Կ'ԸՆԴՈՒՆԵՆ ԿԵՒՐ. ԺՈՂՈՎԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ՄԻՈՒԹԵԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻՆ ՄԷՋ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄԻ ՊԱՇՏՈՆԱՊԷՍ

ԵՒ ԺՈՂՈՎԻՆ Կ'Ը ՆԱԽԱԳԱՀԷ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

ԻՐ առաջին մտածումը եւ առաջին ձեռքը

Մեր նախորդ Զեկոյցով հաղորդեցինք  
թէ միաձայնութեամբ եւ խանդավառու-  
թեամբ կեդր. վարչ. Ժողովը նախագահ  
ընտրեց Տ. Գալուստ Կիւլպենկեան, որպէս  
արժանաւոր յաջորդ մեր յաւէտ ոգրացեալ

Հիմնադիր-նախագահ Պօղոս Նուպար Փա-  
շայի:

Նորընտիր նախագահը, ըստ ժամա-  
գրութեան, 24 Հոկտեմբերի Ուրբաթ օրը,  
Ժամը 4ին, Ավրնիս տ'Իէնայի իր հոյակապ



ապարանքին մէջ ընդունեցաւ Կեղը. Ժողովի պատուիրակութիւնը. — Պատուոյ Նախագահ Վսեմ. Տ. Գ. Նորատունկեան, Փոխ-Նախագահներ և Բարերար Անդամներ Տեառք Տ. Քէլէկեան Խան, Զարեհ Պէյ Նուպար և Պ. Էսմէրեան, Ամերիկայի Շրջ. Յանձնաժողովի ատենապետ Տ. Արշակ Գարակէօզեան, Տեառք Պ. Հալաճեան, Լ. Կիւմիւշկերտան, և Վ. Մալէզեան:

Վսեմ. Տ. Գ. Նորատունկեան խօսք առնելով յանուն Կեղը. Ժողովի հաղորդեց Տ. Կիւլպէնկեանի միաձայն և խանդավառ ընտրութիւնը որպէս Նախագահ Հ. Բ. Ը. Միութեան, և ջերմակին բառերով շնորհաւորեց ինքը, մաղթանքներ ընելով իր արդիւնաւոր պաշտօնավարութեան համար: Տ. Գարակէօզեան խօսեցաւ Ամերիկայի հաղորաւոր անդամներուն կողմէ, ուրախութիւն յայտնելով որ Շրջ. ջանակային յանձնաժողովին իղծն ու մրտաձուլմը, զոր հեռագրով և նամակով քանի մը ամիս առաջ հաղորդած էր Բարիկ իրականացած է ազգին միահամուռ բաղձանքներուն գոհացում տալով: Տ. Քէլէկեան Խան յանձնեց նորընտիր Նախագահին ընտրութեան պաշտօնադիրը:

Տ. Գալուստ Կիւլպէնկեան յայտնապէս զգածուած շեշտերով պատասխանեց, շնորհակալութիւն յայտնելով «այն մեծ պատիւին համար որ իր համեստ անձին» կ'ուղղուէր: Ակնարկեց Կիւլպէնկեաններու պորզասիրութեան որքան և ազգասիրութեան, և խոստովանեցաւ թէ ազգային հաւաքական աշխատանքի վարժ է, որով խնդրեց որ իր մասին ներողամտութիւն ցոյց տրուի, եթէ, անձնապէս բարեկամ չըլլալով վարչական ձեւապաշտութեան, առաւելապէս Միութեան գրական գործերուն կառչի, իր խորհուրդներով և աշխատակցութեամբ օգտակար ըլլալու անկեղծ նախանձախնդրութեամբ: Տ. Կիւլպէնկեանի պարզ և անսկիւնիթ խօսքերը Պատուիրակներու վրայ գործեցին ամենախոր տրպաւորութիւն:

Յետոյ, Տիկին Նուարդ Կիւլպէնկեան, որուն զգալուն սիրտը բարութեան գանձարան մըն է, վայելչօրէն պատուասիրեց օրուան հիւրերը, որ էսպէս այդ ճոխ և հրաշագեղ թանգարանէն մեկնեցան զոհ սիրտով, համոզուած որ Բարեգործականի

համար իսկապէս բարգաւաճումի նոր և փայլուն թուական մըն է որ կը բացուի Տ. Կիւլպէնկեանի նման մեծ եւմտադէտի մը, միտքի և սիրտի հարստութիւններով օժտուած ազնիւ և ազգասէր Հայու մը նախագահութեամբը, որ ազգին բոլոր խաւերուն մէջ անխուր խանդավառութիւն յառաջ բերած է մի քանի օրուան միջոցին, ինչ որ կ'որոտայայտուի ոչ միայն հայ մամուլի համակրական ընդարձակ յօդուածներով, այլ և աշխարհիս ամէն կողմերէն նորընտիր Նախագահին ուղղուած շնորհաւորական հեռագիրներով:

Տ. Կիւլպէնկեան, գերազանցօրէն զործի մարդ, հետեւեալ օրն իսկ ձեռք առաւ Միութեան ղեկը, և ամէն օր, ժամերով, եկաւ Ընդհ. Տնօրէնութեան գրասենեակին մէջ խորհրդակցելու Վարիշ-Պատուիրակին հետ կարեւորագոյն հարցերու շուրջ, գլխաւորաբար Թրքսթներու, որոնց մասին ցոյց կուտայ լարուած հետաքրքրութիւն:

\* \* \*

Երէկ, Զօրեքշարթի, Նուպարեան Մատենադարանին մէջ պաշտօնապէս տեղի ունեցաւ Տ. Գալուստ Կիւլպէնկեանի նախագահական հանդիսաւոր ընդունելութիւնը, Կեղը. Վարչ. Ժողովի, զործակից մարմիններու և Միութեան վիթերաններու կողմէ, սեղմ չըջանակի մը մէջ, որուն փայլը կ'աւելցնէր Տիկին Կիւլպէնկեանի շնորհալի ներկայութիւնը:

Ներկայ էին Կեղը. Վարչ. Ժողովի բարիգարնակ բոլոր անդամները՝ Վսեմ. Տ. Գարրիէլ Նորատունկեան, Տեառք Տիգրան Քէլէկեան, Զարեհ Պէյ Նուպար, Պօղոս Էսմէրեան, Արայ Արապեան, Տիգրան Կամսարական, Լեոն Կիւմիւշկերտան, Պետրոս Հալաճեան, Արամ Ճեփահիրճեան, Սերովբէ Սըվաճեան, Գրիգոր Սինապեան, և Վ. Մալէզեան (Տեառք Ե. Աղաթօն Պէյ և Տիրան Փիլիպպոսեան բացակայ էին քաղաքէս): Ներկայ էին նաև Նիւ Եօրքի Շրջ. ջանակային Յանձնաժողովի ատենապետ Տ. Արշակ Գարակէօզեան և Տիկին Գարակէօզեան, Գահիրէի Շրջանակային Յանձնաժողովի անդամ Տ. Ժանիկ Զօքքըր, Բարերար Անդամ Տ. Միհրան Ղազարոսեան: Նուպարեան ընտանիքը իր յարգանքի ու շագրաւ մասնակցութիւնը բերած էր պատ-



ուելով սոյն հանդիսութիւնը՝ յանձին Մի-  
ութեանն Բարերար Անդամունի Տիկին Նո-  
յեմի Գափամանեանի, Հիմնադիր և Պատ-  
ուոյ Անդամ Առաքել Պէյ և Տիկին Նու-  
պարի, ինչպէս նաև Տիկին Զարին Պէյ  
Նուպարի Կեդր. Ժողովի կողմին ներկայ  
էին նաև Տեղ. Մասնաժողովի Դիւանի ան-  
դամները՝ Տեարք Վ. Թադևոսեան, Օթոն  
Հէքիմեան, Ա. Սաղըրեան և Յ. Սարաճ-  
եան, Տիկնանց Գանձախոսարի անդամու-  
հիններէն՝ Տիկնայք Պ. Էմմէրեան, Լ. Կիւ-  
միւշկերտան, Ա. Ճեմալհրճեան, Տ. Քէ-  
լէկեան և Վ. Մալէղեան, ինչպէս նաև  
Բրորականտի Գանձախոսարի անդամները  
Տեարք Լ. Բաշարեան և Ա. Զօպանեան,  
ու վերջապէս պաշտօնէութիւնը խմբովին,  
որ հիւրամեծարութեան դերը կը կատա-  
րէր ի յարգանս ականաւոր պիտին:

Փոխ-Նախագահ Տ. Տիգրան Սան Քէ-  
լէկեան կարգաց ուղերձ մը յանուն Կեդր.  
Վարչ. Ժողովի, մաղթելով Տ. Գ. Կիւլպէնկե-  
անի կարողութիւն և յաջողութիւն, եւ  
խոստանալով իր և իր պաշտօնակիցներուն  
անվերապահ աջակցութիւնը, ձեռք ձեռքի  
տուած Միութիւնը առաջնորդելու համար  
իր բարձր նպատակներուն: «Երբ, ըսաւ  
Տ. Քէլէկեան, զժբախտութիւնը ունեցանք  
կորսնցնելու մեր սիրելի Նախագահը Պո-  
ղոս Նուպար Փաշան, որ իր ժամանակը,  
խելքն ու սիրտը, և անսպառ վեհանձնու-  
թիւնը տրամադրած էր իր սիրական Բա-  
րեգործականին, զգացինք մեծ բացը զոր  
թողուց իր մահուամբը, զնեղով մեզ զըժ-  
ուարին հարցի մը առջև: Գոհ ենք և բա-  
րեւախտ որ ձեր ընտրութեամբը ամբողջած  
կը զգանք մեր ցաւը, և այսօր կրնանք  
ձեր մէջ սղջունել Միութեան արժանաւոր  
Նախագահը, որ իր բարձր կարողութեամ-  
բը պիտի կրնայ նոր և զօրաւոր ուղղու-  
թիւն մը տալ այս մեծ Ընկերութեան:

Զարին Պէյ Նուպար նշանակալից գե-  
ղեցիկ ճառ մը արտասանեց Ֆրանսերէն  
լեզուով, որ ամբողջովին պիտի հրատա-  
րակուի Միութիւնի յառաջիկայ թիւին  
մէջ: «Սրտի յատկութեանց, զոր մեր Մի-  
ութիւնը կը փնտռէ, մեր հայրենակիցնե-  
րուն թշուառութեանց կարեկցելու և ա-  
նոնց անձկութիւնները ամփոքելու համար,  
պէտք է միանան մեծ միտքի մը յատկու-  
թիւնները, որովհետեւ խելքը կը չափուի

հետապնդուած իտէալին մեծութեամբը.  
ո՛րքան աւելի բարձր է այդ իտէալը, այն-  
քան աւելի կը սաւառնի հոգին ալ, որ  
նախնար կ'ըլլայ երբ կը հասնի տնոր և կ'ի-  
րագործէ անիկա իր խելքովը, իր կամքո-  
վը և իր կորովովը: Համոզուած ենք ա-  
մէնքս ալ որ ձեր մտածումն ալ այդպէս է  
և ատոր համար պարտք սեպեցի շնորհա-  
ւորել իմ բոլոր սիրտովս, որ չընկրկեցաք  
այնքան մեծ դործի մը առջև, այնքան  
ծա՛նր պատասխանատուութիւններով, մա-  
նաւանդ զժուարին վայրկեանի մը:» Այդ  
հայրենաշունչ ճառին մէջէն որ պատիւ կը  
բերէ Նուպարեան տնունին, հաճոյքով վեր  
կը հանենք նաև սոյն հատուածը. — «Պար-  
տաւոր ենք ընել ինչ որ մարդկօրէն կա-  
րելի է Արարատի ոտքը արծարծելու հա-  
մար Հայ քաղաքակրթութիւնը, որպէս զի  
հրաբուխին այսօրուան մարած լոյսի յա-  
ջորդէ հայ հանճարին ճառագայթող բոցը:»  
Ու քանիցս ծափահարուած իր խօսքերը  
վերջացուց, հմայքոտ պատկերէ մը վերջ.  
— «Երբ Մոգերը մեծ կապոյտ երկինքին  
մէջ տեսան Հրաշագործ Աստղին փայլիլը,  
չիտակ քալեցին, աչքերնին սեւեռած ա-  
նոր, ոչ ձախ և ոչ ալ աջ նայելով: Մտա-  
ծումի երկնակամարին մէջ մենք ալ կը տես-  
նենք մեր Իտէալին փայլիլը աստղի մը նը-  
ման, և կ'ուզենք քալել դէպի ան, չնա-  
յելով ոչ ձախ և ոչ աջ: Զեր վրայ է որ,  
սիրելի Նախագահ, վստահութեամբ առլի,  
կը զնենք մեր բոլոր յոյսերը, որպէս զի  
մեր Միութիւնը այդ իտէալին իրականաց-  
ման սատարէ հզօրապէս:»

Տ. Գարակէօղեան ևս խնդակցութեան  
և մեծարանքի խանդավառ խօսքերէն  
վերջ, զոր Ֆրանսերէն արտասանեց՝ Ամե-  
րիկահայութեան ուրախութիւնը յայտնե-  
լով այս բարեղէպ ընտրութեան առթիւ,  
յարգելի Նախագահը Տ. Գալուստ Կիւլ-  
պէնկեան պատասխանեց յետագայ իմաս-  
տալից ու թելադրական ճառով, որ ցոյց  
կուտայ իր հոգիին բարձրութիւնը և հա-  
ւատքը, որով ոգևորուած զիտակցաբար  
ձեռք կ'առնէ ազգաշինութեան մեծ ծրու-  
գրի մը զեկավարութիւնը:

«Շնորհապարտ եմ Հայկ. Բարեգոր-  
ծական Միութեան Պատուարժան Կեդր.  
Ժողովին և իմ բոլոր ազգակիցներուս, դէ-  
պի իմ խոնարհ անձնաւորութիւնս արտա-



յայտած բարձր վստահութեան համար, հրաւիրելով զիս յաջորդելու մեր մեծանուն և հռչակաւոր հայրենակցին Վսեմ. Պօղոս Նուպար Փաշայի: Կը խոնարհիմ յուզեալ զգացումով իւր մեծ զեմքին առջև և կը մաղթեմ որ իւր յիշատակը միշտ մեզ ընկերանայ, քաջալերելու մեր ջանքերը զէպի իւր հիմնարկութեան յառաջդիմութիւնը:

Աիմ գերագոյն նպատակս պիտի լինի խանդավառ ոգիով աշխատիլ բարգաւաճմանը այս ազգային ընկերութեան, պէտք է ըսեմ այս Հայ Տան, որ նա լինի միշտ սիրելի բոլոր Հայերուն, առանց խտրութեան: Ամէն Հայեր որ սփռուած են աշխարհի ամէն կողմ, պէտք է նային գուրգուրանօք զէպի մեր Ընկերութիւնը, իրր մի կենդանի հայկական շէնքի, որ հրճուածքով կը հետապնդէ հայ ժողովրդեան երջանկութիւնը և յառաջդիմութիւնը: Պէտք է գիտնան որ այս ընկերութիւնը հայ օճակն է, միշտ պատրաստ օգնելու այն ամէն Հայերու որ ցաւեր ունին, սրբելու անոնց արցունքը, և աշխատելու նոցա բարոյական և նիւթական բարօրութեան:

«Երբեք չեմ ունեցած տէէ կուսակցական ռոգի, այլ մեծցած եմ հայ հոգիով և աւանդութիւններով. իմ լոկ նպատակս է այս Տան մէջ խանդավառիլ նոյն հոգիով: Միևնոյն ժամանակ, մեր բոլոր խղճմտանքով և բարի կամքով պէտք է քննենք և որդեգրենք այն նոր սկզբունքները և նոր գաղափարները որ, պարագայներու և ժամանակներու բերմամբ, կարող են նոր գործիքներ գառնալ մեր ազգի բարոյական և նիւթական երջանկութեան և յառաջդիմութեան համար:

«Ահա՛ այս նկատողութիւններով ոգեւորեալ կը ստանձնեմ իմ պաշտօնը: Ամենաերջանիկ պիտի լինիմ եթէ յաջողիմ, և, եթէ անկարելի լինի, չպիտի վարանիմ հրաժարելու այս բարձր պաշտօնէն:»

Համակրանքի ջերմագին ծափերով ոգջուռուեցան այս պարզ բայց անկեղծ և ազնիւ խօսքերը, որ բոլոր ներկաներուն համար եղան ներշնչումի աղբիւր և նուիրումի ուխտ մը:

Յետոյ, գինիի, թէյի և օշարակի պատուասիրութիւններ եղան, տաք և սիրովոր

մթնոլորտի մը մէջ, ուր մեր սիրելի Միութեան գլխաւոր վարիչները շրջապատեցին Տէր և Տիկին Կիւլպէնկեանը, զնահատելով անոնց պարգասիրութիւնը և անոնց մէջ տեսնելով Միութեան «հրաշագործ աստղը»:

\* \* \*

Այս պատմական ընդունելութենէն վերջ, Տ. Գալուստ Կիւլպէնկեան առաջին անգամ ըլլալով նախագահեց Կեդր. Վարչ. Ժողովի նիստին՝ որուն ներկայ գտնուեցան նաև Նիւ Եորքի Շրջ. Յանձնաժողովի աւտոնապետ Տ. Ա. Գարակէօզեան և Գահրէի Շրջ. Յանձնաժողովի անգամ Տ. Ծ. Զաքար, ինչպէս նաև Տ. Առաքել Պէյ Նուպար:


Օրակարգի մի քանի կարևոր խնդիրներու նկատառումէն վերջ, յարգելի Նախագահը խօսք առաւ կարևոր զեկուցում մը ընելու համար: Երկարօրէն բացատրեց արդիւնքը իր առաջին ուսումնասիրութեան Միութեան Թրքաթիւրքուն և Հիմնադրամներուն մասին, և իր պաշտօնակիցներուն մասնաւոր ուշադրութեան յանձնեց իր առաջին մտածումը, առոնք զնելու այնպիսի զործնական վիճակի մը մէջ որ Միութեան զրամագլուխներու մեքենան ըլլայ աւելի պարզ և զիւրիւն, որով և մատչելի և համակրելի ծրագրի մը շուրջ հնար ըլլայ խանդավառել նոյնիսկ ժողովուրդին խոնարհ խաւերը: Փորձառու և իրատես կլմտազէտի մը տաղանդովը պարզեց իր գաղափարը, որ պէտք է նիւթ կազմէ անմիջական լուրջ ուսումնասիրութեան, ըստանալու համար վճարական ձև մը: Իր ցունկութիւնն է կազմութիւնը տեսակ մը ազգային մեծ Թրքաթի, միակ և միաձե, ուր կարելի ըլլայ յստակ տեսնել և օրը օրին հետեիլ անիկա կազմող արժեթուղթերու կացութեան, պայմանաւ որ այս վերջինները ամփոփուին և վերածուին սակաւաթիւ տեսակներու: Կեդր. Վարչ. Ժողովը խանդավառութեամբ արձանագրեց իր Նախագահին սոյն զրակտն տեսութիւնները և որոշեց զործնական և իրաւաբանական ուսումնասիրութեամբ մը պատրաստել վերջնական ծրագիր մը, որուն շուրջ խորհրդակցութիւն պիտի կատարուի աւելի զիտակցարար:



Ու երբ ներկայ Զեկոյցով Միութեանս հեռաբնակ անդամները և ազգը համօրէն կը ջանանք տեղեակ ընել նորընտիր Նախագահին նախաշրջանի սրտապնդող իրադարձութեանց, հպարտութեամբ վեր կը հանենք նաև իր առաջին ժեսթը, հազիւ բազմած Միութեանս վարչական սեղանին գլուխը: Երբ կարգը եկաւ Կեսարիոյ որբերուն մասին ուղղուած առաջարկին, զոր քանիցս Ժողովին ներկայացուցած էր Արթ. Սերովբէ Գահ. Պուրմայեան, խնդրելով առնօք ևս ընդունիլ Միութեանս որբանոցներէն մէկուն մէջ, Տ. Կիւլպէնկեան տեսաւ որ Միութեան ներկայ միջոցները թոյլ չեն տար նոր յանձնառութեան մը տակ մտնելու՝ 25 որբերու երրորդ խումբ մը ևս պատասպարելով, և ինքնաբերաբար յանձն առաւ տարեկան 600 Անգլ. Ոսկի տրամադրել, այդ դժբախտ տղաքը ազատելու համար իրենց ներկայ խղճալի վիճակէն: Կեդր. Ժողովը փութաց իր երախտագիտութիւնը յայտնել այս գեղեցիկ ժեսթին առթիւ որ հինգ տարուան համար կ'ապահովէ երեք հազար Անգլ. ոսկի կարենոր օժանդակութիւն մը:

Բարիք, 30 Հոկտեմբեր 1930

ԴԻԻԱՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ



Մարդն է որ կը զանազանի քարին և չարք. կը փախչի չարէն և կը հետևի քարին, որ կասարուելու է մարգարէին համաձայն. «Խոսորեա՛ց ի չարէ և արա՛ զքարի»: Իսկ անասունները ասիկա չեն գիտեր, այլ միայն հեշտային կ'ընտրեն:

Դարձեալ՝ մարդն է որ կը կարգաւորէ իր քարկոտեան և ցանկութեան կիրքերը՝ քանակակէսին կանոններուն համաձայն:

Մարդը ինսցալիստով ինքզինքը աշխարհէն աւելի վեր կը վերցնէ: Իսկ չարկով երկրաւորներու՝ աշխարհէն աւելի վար իջած կ'ըլլայ: Եւ այն աշեն իր պասիւնէ կը մերկանայ և անասուններու յաշկոտիւնները կ'ստնէ, ինչպիսի՜ ցանկութեամբը՝ խոզ կ'ըստի, քարկոտեամբը՝ շուն, յաիշկոտեամբը՝ գայլ, ևւայլն:

ՏԱՌԵԻԱՅԻ Լըցմ. ՀՏ. Ե.

## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Հանգուցեալ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպարին իբրեւ յայտող Վսեմ. Տիար Գալուստ Կիւլպէնկեանի Հ. Բ. Ը. Միութեան նախագահ ընտրուելուն առթիւ Ս. Արքայ Պատր. Տեղապանին կողմէ նորին Վսեմութեան ուղղուեցաւ շնորհատական հետեւեալ հեռագիրը, Հոկտ. 24 ին

Նորին Վսեմութեան

Տիար Գալուստ Կիւլպէնկեանին, Փարիզ

Հ. Բ. Ը. Միութեան Նախագահութեան Ձեր ընտրութիւնը կը շնորհակալութեամբ ջերմօրէն եւ կը մաղթենք որ Բարեգործականը երկար եւ բարեխաղող տարիներ վայելէ Ձեր Բարձր հովանաւորութիւնը:

ՏԵՂԱՊԱՀ ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Վսեմ. Տիար Գալուստ Կիւլպէնկեանէ հետեւեալ օրն իսկ ստացուեցաւ հետեւեալ հեռագրական պատասխանը.

Դերմեհրի Տ. Մեսրոպ Տպիսկոպոս

Պատրիարքական Տեղապահ Նուստաղիմ

Անկեղծ շնորհակալութիւններ: Շատ զգածուած եւ երախտապարտ եմ Ձեր հեռագրին համար: Կը խնդրեմ ընդունիլ մեծաւարձութեամբ:

ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆ

Երովպոյ Վսեմ. Կայսեր Թագադրութեան առթիւ, 1 Նոյ. ին, Պատր. Տեղապահ Մրբագանի կողմէ նորին Վեհափառութեան ուղղուեցաւ շնորհատական հետեւեալ հեռագիրը, որուն մէկ օրինակը՝ շնորհատական զրով մը յանձնուեցաւ տեղւոյն երովպական Հիւպատոսարանին:

Նորին Վեհափառութեան Հայր Սէլատ Ա.

Կայսեր Երովպոյ, Ատախ-Ապէպա

Յուդայի Առիմին Արժանաւորանք Վեհապետի Թագադրութեան առթիւ անհուն բերկրութեամբ մեր շնորհատութիւնները կը մատուցանենք Ձեր Վեհափառութեան: Կը մաղթենք առ Ամենաբարձրէն շնորհել Ձեր Վեհափառութեան երկար կեանք՝ երովպական Գանուն փառքին եւ Ձեր հաւատարմ հպատակներուն յաջողութեան և բարօրութեան համար:

Տեղապահ Նուստաղիմի Հայր Պատրիարքական ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ի պատասխան ստացուած է հետեւեալ հեռագիրը.

Նորին Ամենապատուութեան

Մեսրոպ Տպիսկոպոսին

Պատրիարքական Հայր Նուստաղիմ

Նորին Կայսերական Վեհափառութիւնը համայնք ինձ հաղորդել Ձեզ իր շնորհակալութիւնները այն բարեմաղրութեան համար զորս բարեհաճած էիք ուղղել իր Թագադրութեան առթիւ:

ՊԱՌԹԻՆԿԵԹԱ ՀԵՐՈՑ